**ՏԵՂԵԿԱՆՔ**
**«ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ» ՄԱՍԻՆ**
**ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ**

**Հոդված 19. Ֆոնդի ակտիվների բաժանումը և դրանցից բաժնի առանձնացումը**

1. Արգելվում է պայմանագրային ֆոնդի ակտիվների բաժանումը կամ դրանցից որևէ մասնակցի բաժինը առանձնացնելը, բացառությամբ սույն օրենքով սահմանված կարգով ֆոնդի դադարման ժամանակ ֆոնդի ակտիվները մասնակիցների միջև բաշխվելու դեպքի:

2. Ֆոնդի մասնակցի մոտ այլ գույքի անբավարարության դեպքում նրա պարտավորությունների դիմաց կարող է բռնագանձում տարածվել նրան պատկանող փայի (փայերի) (բացառությամբ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի) նկատմամբ՝ փայի հաշվարկային արժեքի և ֆոնդի մասնակցի պարտավորության տարբերության փոխհատուցման պայմանով՝ հանելով փայի իրացման, այդ թվում՝ հետգնման ներկայացման հետ կապված ծախսերը:

3. Կատարողական վարույթի շրջանակներում ֆոնդի մասնակցի փայի վրա բռնագանձում տարածելու հարաբերությունները կարգավորվում են «Կատարողական վարույթի մասին» օրենքով: